

Հայաստանի Առաջին Հանրապետություն. լույսն ու ստվերը

Ռուբեն Նահատակյան
պատմաբան, վերլուծաբան /Հայաստան, Երևան/
rubenn52@mail.ru

Վճռորոշ քառեր՝ հայի տեսակ, հայոց պետականություն, ազգային ռազմավարություն, Հայաստանի Առաջին Հանրապետություն

Первая Армянская Республика:

світ и тень

Рубен Наатакян
эксперт-историк (Армения, Ереван)
rubenn52@mail.ru

Аннотация. В статье представлена историческая миссия Армянского типа и божественный характер создания государственности, что является новым научным видением.

Рассматриваются причинно-следственные факторы создания Первой армянской республики. Государственность в Армянском нагорье была процессом постоянным и непрерывным, хотя временами была непризнанна с точки зрения международного права.

Рассматриваются некоторые особенности в деятельности армянской политической верхушки и исторические обстоятельства создания Первой республики. Проблемный вопрос охвата героических сражений 1918 г., рассматривается в новой трактовке, как единой системы сопротивления.

Ключевые слова: Армянский тип, армянская государственность, национальная стратегия, Первая армянская республика.

The First Republic of Armenia the Light and the Shadow

Ruben Nahatakyan
expert historian (Armenia, Yerevan)
rubenn52@mail.ru

Abstract. This article touches upon the Armenian- type historical mission and the divine nature of political system creation which is a newly- accepted scientific concept.

The cause-and-effect factors for creation of the First Republic of Armenia are considered herein. Political system in the Armenian Highlands has been an everlasting and continuous process though sometimes unrecognized in terms of the International Law.

Peculiarities of the activities of the Armenian political elite and historical circumstances of creation of the First Republic are observed herein. The issue of involvement of heroic battles going back to 1918 is commented on with a new approach, evaluating it as a unified system of opposition.

Keywords: Armenian type, Armenian statehood, national strategy, First Armenian Republic.

Հայի տեսակը առաջնաձին է և երկնաշնորհ, ով հստակ կատարում է աստվածային իր վսեմ առաքելությունը; Այժմ առաջադեմ գիտությունն ընդունում է, որ պետությունը տիեզերական ուժերի տված արտոնությունն է: Դա վերաբերում է Հայաստանին՝ Հայա Աստծո սերնդի տանը, Եգիպտոսին, Սումերին /Շումեր/ և այլն: Պետության առաջին գահակալներն Աստվածներն են եղել կամ էլ աստվածաձային մարդիկ, կիսաստվածները¹: Դեռ

ավելին. արմենոիդ տեսակի ներկայացուցիչներն ամենուրեք, աշխարհագրական տարբեր լայնություններում, արարել են պետություններ և հաստատել քրմական հայեցակարգային իշխանություն:

Այնպես որ, մենք հզոր ենք եղել և մեր կամքը թելադրել մնացյալ աշխարհին՝ լինելով առաջնորդ և մտքի աշխարհակալ: Այս օրինաչափությունը գործել է պատմության քառուղի-

սիսյան, Սրբազան լեռնաշխարհը. Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում: - Երևան. Երևանի համալսարանի հրատ. 2006, էջ 5-6:

¹ **Грэм Хенкок.** Следы богов. В поисках истоков древних цивилизаций. – М.: изд. Вече, 1997. – 378 с. **Արտակ Սով-**

ներում և տարբեր ժամանակներում: Շատ դեպքերում մյուս ազգերը մեզ օգնության են կանչել, և մենք սրբորեն կատարել ենք աստվածային օրենքները պահպանելու մեր գործառույթը, քանի որ տիեզերական ուժերի հովանավորյալն ենք:

Պետք է արձանագրել, որ կյանքը սրբնթաց առաջ է ընթանում, շատ բաներ են փոխվում, բայց պատմագիտության մեջ քիչ բան է փոխվում. կենսունակ են մնում նույն կադապարները և կարծրատիպերը: Այդպես է նաև պետականության աստվածային ծագման տեսադրույթի խնդիրը, որը ժամանակակից պատմագիտությունը չի ընդունում և դրանով իսկ իրեն դատապարտում ամլության: Հենց այս առումով էլ այժմ, անհասկանալի պատճառներով, չի ընդունվում Հայկազունիների արքայատոհմի իրական և պատմական լինելը, մի հարստություն, որը աստվածային ծագում ունի: Չմոռանաք, որ այդ մասին վկայում է քերթողահայր Մովսես Խորենացին²: Գուցե այս հարցում դեր է խաղում պլեբեյական իշխանության և սպասարկու գիտական համակարգի կաշտն հանգամանքը:

Ընդունված է նաև հետևյալ սին և հիմնագուրկ տեսադրույթը, թե Կիլիկյան պետության կործանումից հետո /1375 թ./ մենք պետություն չենք ունեցել մինչև Հայաստանի առաջին հանրապետությունը: Մինչդեռ հայոց պատմության լրջմիտ և խորաքնին գնությունը ցույց է տալիս, որ հայերս պետականություն միշտ ունեցել ենք, թեկուզև իրավաբանորեն և միջազգայնորեն չճանաչված: Խոսքը Ջեյթունի, Համշենի, Սասունի, Արցախի, Մամգիսեի և այլ իշխանությունների կամ իշխանապետությունների մասին է, որոնք գոյություն են ունեցել դաժանագույն և անագորոյն պայմաններում/վայրենաբարո օսմաններ, սելջուկներ, մոնղոլներ և այլն/, բայց եղել են կենսունակ: Դրանք ղեկավարել են թագավորական և ազնվականական տոհմերի ներկայացուցիչները, ունեցել են իշխանության հայտանիշներ/կառավարման համակարգ, դատական գործառույթ, բանակ, դրամահատում և այլն/: Խնդիրն այն է, որ պետական այդ կազմավորումները միջազգային իրավունքի առումով ընդունված և ճանաչված չեն եղել, քանի որ

օտար և թշնամի երկրները խոչընդոտ են եղել այդ երևույթին:

Անկախության գաղափարը կենսական անհրաժեշտություն է և տրված է Աստծուց: Իսկ հայերս միշտ բարձր ենք գնահատել դրա արժեքը և հարատև պայքարել ենք ազատության իրավունքի համար: Հիշենք թեկուզև մեր փառահեղ նախնուն՝ Հայկ Նահապետին, որը պայքարեց ազատության համար և մեզ պատգամեց պահպանել աստվածային այդ շնորհը: Մեզ բնորոշ է անկախության բացարձակ զգացումը և խորթ՝ ստրկամտության հակումը³:

Հայոց պետականաստեղծ միտքն ու ձիրքը մշտապես գործել են, քանի որ բխել են արարչական մեր էությունից և պաշտպանել հայի ազգային ինքնությունն ու դիմագիծը: Վիճակը բարդ էր այն տեսակետից, որ մեր թշնամիները նենգությամբ և խորամանկությամբ տապալել էին Հայոց ազգային համակարգը և մեզ դարձրել խոցելի ու թիրախային: Թերևս, դեր է կատարել մեր միամտությունը և անպաշտպան ազնվությունը:

Իսկ ինչպե՞ս ծնվեց Հայաստանի առաջին հանրապետությունը: Դա, հարկավ, պատմական մեծ նշանակություն ունեցող և դրական երևույթ էր: Կարծում եմ՝ մեծ դժվարությամբ և ծանր երկունքով: Պատճառները բազմաթիվ և բազմազան էին: Այդ ժամանակաշրջանում մենք չունեինք ազգային ռազմավարություն և ընտրանի, հանրային պետական մտածողությունը ցածր մակարդակի էր, հայությունը երկփեղկված էր /արևմտահայ-արևելահայ/, երկրիզարգացման համար արգելակիչ դեր էին կատարում թշնամի բազմաթիվ տարրեր, հիմնականում ադրբեջանցի, օսմանցի և այլն, տականքը ծավալել էր բացասական գործունեություն՝ գործակցելով թշնամիների հետ և այլն:

Քաղաքական մեր վերնախավը այդպես էլ օրինաչափ ձևով չդարձավ ազգային ընտրանի: Քաղաքական մեր միտքը ծանր պարտություն կրեց, որովհետև քաղաքական մեր գործիչները չկարողացան առաջնորդվել իրական քաղաքականությամբ, կռահել մեր թշնամիների ծրագրերն ու մտադրությունները, հասկանալ ռազմավարական ճիշտ ուղղությունները,

² **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն: -Երևան. Երևանի համալսարանի հրատ., 1981, էջ 109:

³ **Արտակ Մովսիսյան**, Հայոց գաղափարախոսության միքսնի հնագույն հիմնադրույթների մասին. // Հայաստանի Հանրապետություն, 04.05. 2002:

համախմբել ժողովրդին արհավիրքների դեմ, դրսևորել ուժեղ կամք, գործել աստվածային ճշգրիտ տեխնոլոգիաներով, մշակել անկախության համապարփակ ծրագիր և այլն:

Կարևոր է նաև մեկ պարագա ևս: Արևմտյան Հայաստանի կործանման պատճառներից մեկն այն է, որ մենք պատրաստ չէինք կտրուկ փոփոխությունների և անկախության կարգավիճակի: Քաղաքական վերնախավը հասուն չէր և պատրաստ չէր ճիշտ որոշումներ կայացնել՝ բավարարվելով սոսկ Կովկասյան ծրագրի իրագործմամբ: Այսպես, այդ ժամանակների արխիվային վավերագրերը խոսուն կերպով ներկայացնում են բուն իրականությունը: Հայաստանի քաղաքական ղեկավարությունը որդեգրել էր բավականին պարզունակ և միամիտ պահվածք. անտեսում էր բոլշևիկյան շարժման իրական և առարկայական գործոնը, որը լուրջ սխալ էր: Նա դիվանագիտական սերտ և համակողմանի կապեր էր հաստատում Վրանգելի, Կոլչակի, Յուդենիչի, Կրասնովի և այլոց հետ, որոնք այդպես էլ չհաղթեցին և չունեին պատմական հեռանկար:

Մեկ ցավալի երևույթի մասին: Ցավոք, Առաջին հանրապետության ստեղծման նախօրեին և ընթացքում մենք չունեինք ազգային միասնական գիտակցությունն ծրագրեր: Արևմտահայերն այդպես էլ չընդունեցին արևելահայերի պետականությունը և փաստորեն, չաջակցեցին այդ իշխանությանը: Իսկ հանրապետության ղեկավարներն էլ լրջորեն չէին զբաղվում արևմտահայերի հիմնախնդիրներով:

Արևմտահայ գաղթականները լավ չընդունվեցին Արևելյան Հայաստանում և մնացին մեկուսի վիճակում: Իսկ միջազգային հարթակում մեր երկու հատվածը ներկայանում էր առանձին-առանձին, որը բացասաբար ազդեց Հայկական հարցի լուծման վրա: Ինչպես գիտենք, կար երկու պատվիրակություն՝ Պոդոս Նուբար փաշայի և Հայաստանի Հանրապետության պատվիրակությունները, որոնք Փարիզի համաժողովում լավ չընդունվեցին:

Իրական քաղաքականությունն այն էր, որ անհրաժեշտ էին ռազմավարական ամուր կապեր քաղաքական հաջողություններ ունեցող բոլշևիկների հետ և դրանք հմտորեն օգտագործել ազգային ու պետական մեր շահերի համար: Այդ ժամանակ մենք կկարողանայինք

ճեղքել թուրք-ադրբեջանական-ռուսական բոլոր և տեղ զբաղեցնել այդ շղթայում: Իսկ մեր բոլշևիկները միամիտ ու ռոմանտիկ պահվածք ունեին և իսպառ մոռացել էին Հայաստանի ու հայության խնդիրները: Այս կացությունը մեզ վրա շատ թանկ նստեց: Մենք կորցրինք հայրենիքի և բնակչության մեծ մասը և կանգնեցինք կոտրած տաշտակի առջև:

Այդուհանդերձ, մենք համախմբվեցինք և հակադարձեցինք ռիսերիմ թշնամուն: Ճշտենք նաև մի անտեսված հարց: Այդ ժամանակվա դիմադրության ճակատը շատ մեծ ընդգրկում ուներ. Ախալքալաք, Մաթիսա, Տամալա, Ախալցխա, Սառնաղբյուր, Սարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա և այլն: Մենք քանիցս անհաջող փորձ արեցինք վերականգնել պետականությունը Վանում /1915 թ. մայիս – հունիս և 1917 թ. ապրիլ – 1918 թ. մարտ/⁴ և Կիլիկյան Հայաստանում / 1920 թ. օգոստոս 4 – 1921 թ. հոկտեմբերի 20/⁵, բայց արդյունքի չհասանք: Բացակայում էին քաղաքական իրական հաշվարկները, ռազմավարությունը, դիվանագիտական ճկունությունը, ոգեղենությունը, ներդաշնակությունը և այլն: Դրանից օգտվեցին ռուսները, ֆրանսիացիները և թուրքերը:

Բայց տեղի ունեցավ հրաշքը. 1918 թ. մայիսի 31-ին հաջողվեց հանրապետության ստեղծումը Արևելյան Հայաստանի տարածքների վրա, որը պատմական Հայաստանի սոսկ մի մասն էր: Գիտական առումով մայիսի 28-ի ընդունումը հայեցակարգային լուրջ սխալ է գործվել, քանի որ այդ ժամանակ սոսկ որոշվել էր անկախ Հայաստանի անունից պաշտոնական պատվիրակություն ուղարկել Բաթում: Նույն մայիսի 31-ին Հայոց ազգային խորհուրդը Թիֆլիսում հայտարարել է. «*Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ՝ Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն*»⁶: Սա է պատմա-

⁴ Ավետիս Հարությունյան, Վասպուրականի նահանգային ինքնավար կոմիսարության / երկրորդ կառավարության / գործունեությունը: // Պատմաբանասիրա կանհանդես, 2012, թիվ 3, 37-51:

⁵ Հայոց պատմություն, հ. 4, - Երևան, «Զանգակ-97» հրատ., 2010, էջ 222, 231:

⁶ ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ. 120, թթ.59-60:

կան ճշմարտությունը: Եվ դա կատարվել է որպես հետևանք, քանի որ Վրաստանը և Ադրբեջանը արդեն հռչակել էին իրենց անկախությունը:

Այս հարցում զգալի դեր խաղաց Հայ առաքելական, ուղղափառ և գերագահ եկեղեցին՝ կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի /Տփղիսեցի, 1847-1930 թթ./ գլխավորությամբ: Նա հրաժարվում է տեղափոխվել Սևանի վանք և որոշում է մնալ և պաշտպանել Մայր աթոռը⁷: Ավելին, նրա կարգադրությամբ Արարատյան դաշտավայրի եկեղեցիները երեք օր շարունակ տազնապի և մարտակոչի զանգեր էին հնչեցնում և մարդկանց գորակոչում մարտադաշտ: Բացի այդ, Մարդարապատի ճակատամարտին մասնակցել են նաև հոգևորականները, ինչպես հայագետ Գարեգին Հովսեփյանը և այլք: Մասնակիցների մեջ էին նաև գրող Ակսել Բակունցը, հայագետներ Ա. Ղարիբյանը, Գ. Ղափանցյանը, գորավար Հովհաննես Բաղրամյանը և այլք⁸: Դա իրականացավ բացառիկ շնորհներով օժտված քաղաքական ու պետական գործիչ Արամ Մանուկյանի հսկայական ջանքերի և կազմակերպչական մեծ ունակությունների շնորհիվ⁹: Վերոնշյալ ճակատամարտերը, որոնք մեր հաղթական էության, հավաստումն են, իրական ազդակ դարձան այդ պետության կերտման համար: Այսինքն՝ այդ դարավոր իդան իրականացավ մեր ժողովրդի և քաղաքական գործիչների մեծ զոհողությունների և դաժան տվայտանքների շնորհիվ: Եվ սա հայոց պատմության աստեղային ժամերից մեկն է: Արամ Մանուկյանը ինելամիտ ու վճռական քայլերով կարողացավ հաղթահարել հուսահատության, անելանելիության և դատապարտվածության տրամադրությունները՝ ժողովրդին հանելով հաղթամարտի: Ցավալի է նշել, որ մենք այսօր անգամ ի վիճակի չենք գնահատել ու աչքի լույսի պես պահպանել նրա տունը Երևանում: Տարօրինակ է, չէ՞:

Ճակատամարտերի հարցում բացակայում էին փոխկապակցվածությունը, համակարգումը և ներդաշնակությունը, որոնք կարող էին լավ արդյունք տալ և գոնե միավորել Արևելյան Հայաստանի անջատ-անջատ հատվածները՝

⁷ Մեր հաղթանակները, հ. Դ: -Երևան, «Գազպրինտ» ՄԴԸ, 2012, էջ 185:

⁸ Նույն տեղում, էջ 187:

⁹ Նույն տեղում, էջ 185:

Կարսը, Սուրմառուն, Ջավախքը, Թոեղքը, Մամցխեն և այլն: Հետաքրքիր է, որ գեներալ Մովսես Միլիկյանն իրավացիորեն առաջարկում էր զարգացնել Մարդարապատի հաջողությունը և անցնել Արաքսը, բայց նրան զարմանալիորեն թույլ չտվեցին: Սա ռազմավարական լրջագույն սխալ էր, որը ծանր հետևանքներ ունեցավ: Պատմական պահը բաց էր թողնված:

Մեկ ուրիշ սխալ էր նաև Հայաստանի առաջին հանրապետությունն ստեղծել գավառական և պետականության ավանդույթներ չունեցող Երևան կենտրոնով, որը հենց մեր թշնամիների դիվային ծրագիրն էր: Մինչդեռ հայկական Տփղիսը /Թիֆլիս/ շատ հարմար էր մայրաքաղաք դարձնելու համար: Եվ ահա թե ինչու: Հայկական քրմական դասի կենտրոն այս պատմական քաղաքը եղել է նաև հայ ազնվականության և հոգևորականության միջավայրը, որտեղ դարեր շարունակ մշակվել են ազգային և պետական հարուստ ավանդույթներ: Բացի այդ այստեղ կար մեծաթիվ հայություն, որը սատար կլիներ պետությանը: Բայց հուդայական ուժերը /մենշնիկների մասունական ժողովարան/ կարողացան նենգությամբ և խորամանկությամբ կամազուրկ մեր գործիչներին դուրս մղել Կովկասի և Արևելյան Հայաստանի կենտրոն Թիֆլիսից: Ռազմավարական այս խնդրի լուծմանը չճառայեց 1918թ. հայ-վրացական հաղթական պատերազմը, երբ Դրաստամատ Կանայանը զիջեց նախաձեռնությունը և հեռացավ Թիֆլիսի մատույցներից: Ընդամենը մեկ քայլ էր մնում Հայաստանի հզորացման բնական ճանապարհից, բայց դա չարվեց: Բացասական ազդեցություն ունեցան անգլիական մասունները, ինչպես նաև հայ մասունները, որոնք իրենց համախոհներին զիջեցին հայկական հինավուրց քաղաքը:

XX դարի 10-ական թվականներին Անդրկովկասում և Հայաստանում սրընթաց դեպքեր էին տեղի ունենում, որոնք վճռորոշ դեր կատարեցին հայության պատմական ճակատագրում: Խնդիրն այն է, որ 1918-1920 թթ. այս տարածաշրջանում մեկ միասնական հայկական պետության փոխարեն ձևավորվեց երեք իշխանություն՝ Բաքվի բոլշևիկյան կոմունան /1917 թ. նոյեմբերի 2 – 1918 . հուլիսի 31/, Հայաստանի Հանրապետությունը / 1918 թ. մայիսի 30 – 1920 թ. դեկտեմբերի 2/ և Լեռնահա-

յաստանը/ 1920 թ. դեկտեմբերի 25 – 1921 թ. հուլիս/։ Սա քաղաքական և ազգային միասնական մտածողության բացակայության հետևանք էր¹⁰։ Ընդ որում, բոլշևիկ Ս. Շահումյանի անխոհեմ և անհեռատես քաղաքական վարքագծի՝ Աստրախան փախուստի հետևանքով օսմանյան զորքը կարողացավ գրավել Բաքուն և կոտորել քաղաքի իրական տերերին՝ հայերին։ Մեր ձախողումների պատճառն այն էր, որոշ քաղաքական ուժեր անտեսում էին ազգային մեր շահերը և ծառայում հուդայական ծրագրերի իրականացմանը։ Խոսքը համաշխարհային հեղափոխության սատանայական ծրագրի մասին է։ Դրանով է բացատրվում մարդկային, տարածքային, նյութական և բարոյահոգեբանական վիթխարի կորուստները։ Մենք հաղթանակներ չկերտեցինք զուտ մեր ապաշնորհ և ապիկար վերնախավի հանցավոր ու թափափված վարքագծի պատճառով։

Այս ամենի հետևանքով մենք այժմ ունենք բարդ հիմնախնդիրների խրթին մի թնջուկ, որի լուծումներից մեկը հայ գորականի Արցախյան հաղթամարտն էր։ Եվ դարձյալ չկա քաղաքական մարտնչող և խելամիտ թիմը։ Ցավոք, տխուր պատմությունը օրինաչափորեն կրկնվում է։ Մենք հռչակեցինք Հայաստանի Հանրապետության և Արցախի միավորումը, բայց դա չիրագործեցինք։ Այժմ ևս մենք չունենք մեկ միասնական պետություն, որը քաղաքական և ռազմավարական այլասերված մտածողության պտուղն է։ Իսկ քաղաքական մեր գործիչները այս վիճակը համարում են դիվանագիտական հաղթանակ և անհասկանալի հրճվանքի մեջ են։ Մի՞ թե մենք լուծել ենք թշնամու անվերապահ անձնատուր լինելու և դեպի ջրավազան /Կասպից ծով/ ելք ունենալու ռազմավարական խնդիրները։ Իսկ հայ բարձրաստիճան զինվորականության երևելի ներկայացուցիչները համոզված պնդում են, որ մենք Արցախյան պատերազմում ի վիճակի էինք գրավել Բաքուն /նախկին՝ Բագավան/։ Ահա այսպես մենք թեթևամտորեն և անխոհեմ ձևով կորցրինք պատմական պատեհության պահը։ Սա արդեն դարձել է արատավոր սովորույթ, որից պետք է շուտափույթ ազատվել։

Միով բանիվ, մենք ներկայումս քաղաքական և մտավոր նոր ուժերի ու գաղափարների կարիքն ունենք։ Անհրաժեշտ են խաղի նոր կանոններ։ Պետք չէ տարվել պատրանքներով և ինքնախաբեությամբ։ Հայեցակարգային լուրջ սխալ էր նաև խորհրդարանական մոդելի ընդունումը, որն զգալիորեն կթուլացնի մեր պետությունը։ Մենք պետք է վերականգնենք նախագահական ուժեղ մոդելը՝ հետագայում այն վերածելով ազգային միապետության։ Այս առաքելությունը կարող է կատարել միայն ազգային ընտրանին, որը հասու է ձևավորել ազգային գաղափարների կրող ուսուցիչների խումբը։ Մենք այժմ ունենք օտար հայեցակարգային իշխանություն, որը որոշում է ամեն ինչ ի վնաս մեզ։ Մերունդներն սպասում են մեր ողջամիտ և խոհեմ որոշումներին։

Գրականություն

1. ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 120, թթ. 59-60
2. **Հակոբյան Թաթուլ**, Արարատյան տիեզերք։ - Երևան. Հեղինակային հրատ., 2010
3. Հայոց պատմություն, հ. 4, - Երևան, «Զանգակ-97» հրատ., 2010
4. **Հարությունյան Ավետիս**, Վասպուրականի նահանգային ինքնավար կոմիսարության/երկրորդ կառավարության /գործունեությունը։ // Պատմաբանասիրա կանհանդես, 2012, թիվ 3
5. Մեր հաղթանակները, հ. Դ։ - Երևան, «Գազպրինտ» ՍՊԸ, 2012
6. **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն։ - Երևան. Երևանի համալսարանի հրատ., 1981
7. **Մովսիսյան Արտակ**, Սրբազան լեռնաշխարհը. Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում։ - Երևան. Երևանի համալսարանի հրատ. 2006
8. **Մովսիսյան Արտակ**, Հայոց գաղափարախոսության միքսի հնագույն հիմնադրույթների մասին. // Հայաստանի Հանրապետություն, 04.05. 2002
9. **Хенкок Грэм**, Следы богов. В поисках истоков древних цивилизаций. – М.: изд. Вече, 1997. - 378 с.

¹⁰ **Թաթուլ Հակոբյան**, Արարատյան տիեզերք։ - Երևան. Հեղինակային հրատ., 2010, էջ 49։